ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1

ք. Երևան «24» 08 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 հատվածի վերակառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է **240** օր՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 **Աշխատանքների առնվազն 100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **1 080 000 000** (մեկ միլիարդ ութսուն միլիոն) ՀՀ դրամ, որից **180 000 000** (մեկ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	«Լոեպոլդ և ընկերներ» ՍՊԸ-
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՀ, ք. Երևան, Արարկիր 39/1 ա
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011025823	ՀՀ 2470074677530000
ՀՎՀՀ 02815457	ՀՎՀՀ 00106947
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն
Ա. Երիցյան	Ա. Բադալյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«24» «08» 2022 թ.

Հավելված թիվ 1
կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 հատվածի վերակառուցման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը *	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 3կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	3992	1835	7 325 320
2	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 4կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	897	1835	1 645 995
3	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 5կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	1784	1835	3 273 640
4	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 6կմ (հարթում. ջրում. խտացում)	մ³	7073	1835	12 978 955
5	33r-III կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	46724	1835	85 738 540
6	33r-III կարգի բնահողի մշակում բուլդոզերով. տեղափոխում 50մ կուտակում. բարձում ա/ի էքս. 1.25մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	5192	1835	9 527 320
7	9в-II կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 50մ կուտակում. բարձում էքս. 1.25մ3 շ.տ. ա/ի և տեղափոխում 2կմ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	6084	1835	11 164 140
8	Ե/բ ծածկի քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի էքս. 0.65մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ. h=14սմ	մ³	14	1835	25 690
9	Գոյություն ունեցող ծածկի քանդում էքս. 1.0 մ3 շ. տ. բարձում ա/ի. հմիջ=10.0սմ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	132	1835	242 220
	Աստիճանների կառուցում				
1	Աստիճանների կառուցում 33r-III կարգի բնահողում բուլդոզերով (տեղափոխում մինչև 20մ)	մ³	276	1835	506 460
				Ընդամենը I	**132 428 280**
	II. Կողային առուներ				
1	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում էքս 0.65մ3 շ.տ.. բարձում տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ	մ³	2564	2051	5 258 764
2	Կողային առուների իրականացում 33r-III կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռ.	մ³	135	2051	276 885
3	9в-II կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում 2կմ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	198	2051	406 098

4	Կողային առուների իրականացում 9ռ-II կարգի բնահողում ձեռքով. բարձում էքս 0.65մ3 շ.տ տեղափոխում 2կմ պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	10	2051	20 510
				Ընդամենը II	**5 962 257**
	III. Կողային առուների ամրացում				
1	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65 մ3 շ.տ. ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	657	2275	1 494 675
2	33r-III կարգի բնահողի մշակում և բարձում ձեռքով ա/ի վրա. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորության վրա	մ³	73	2275	166 075
3	Կողային առուների ամրացում Б-8 հավաքովի սալերով (49x49x8սմ). խճային հիմքի վրա	հատ	16224	4990	80 957 760
				Ընդամենը III	82 618 510
	IV. Կողնակներ				
	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում կողնակների լիցք 5կմ միջին հեռ. (հարթում. ջրում. խտացում)	մ³	4034	2670	10 770 780
1	Կողնակների ամրացում ավազակոպճային նյութով հմիջ.=10սմ.	մ²	15514	1060	16 444 840
				Ընդամենը IV	**27 215 620**
	V. Երթևեկելի մաս				
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակոպիճ) h=10 սմ	մ²	49997,5	900	44 997 750
2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ 100մ² համար խիճ (40-70) 10% - 2.6մ³ խիճ (20-40) 35% - 9.1մ³ խիճ (10-20) 20% – 5.2մ³ խիճ (5-10) 10% – 2.6մ³ խիճ (0-5) ավազ 25% – 6.5մ³ ջուր-1.1մ3	մ²	30485,0	2000	60 970 000
3	Խոշորահատիկ բարձր ծակոտկենությամբ ա/բ h=6սմ	մ²	29285,3	5110	149 647 883
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	29285,3	6800	199 140 040
5	"Б" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ²	29285,3	4950	144 962 235
				Ընդամենը V	**599 717 908**
	VI. Իջատեղեր և մուտքեր				
1	Ե/բ ծածկի քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի էքս. 0.65մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ. h=14սմ	մ³	25,62	42100	1 078 602
2	Գոյություն ունեցող մետաղական խողովակների ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը d=530մմ	գծմ	47,1	2570	121 047
3	Գոյություն ունեցող մետաղական խողովակների գլխամասերի քանդում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ	մ³	4,4	1910	8 404
4	Գոյություն ունեցող մետաղական խողովակների ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը d=273մմ	գծմ	37	1320	48 840
5	33r-III կարգի բնահողի մշակում էքս. 1.25մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ միջին հեռ.	մ³	707,0	1680	1 187 760
6	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լիցք 4կմ միջին հեռ. (հարթում. ջրում. խտացում)	մ³	262	2570	673 340
				Ընդամենը VI	**3 117 993**
	VII.Երթևեկելի մաս				
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակոպիճ) h=10 սմ	մ²	1764,71	910	1 605 886,10

2	Խճավազային հիմք (C - 5) h=15 սմ խիճ (40-70)- 10% - 1.95մ³ խիճ (20-40)- 35% - 6.825մ³ խիճ (10-20)- 20% - 3.9մ³ խիճ (5-10)- 10% - 1.95մ³ խիճ (0-5)- ավազ. 25% - 4.875մ³ ջուր-1.1մ³	մ²	1764,71	1590	2 805 888,90
3	Б տիպի մանրահատիկ խիտ ա/բ h = 5 սմ	մ²	1624,53	6100	9 909 633
	Մետաղական խողովակներ Ø 530մմ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ³	6,617	9360	61 935,12
2	Մետ. խողովակների Ø 530x7մմ տեղադրում	գծմ	101,8	134810	13 723 658
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գծմ	95,2	3660	348 432
4	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ³	8,8	122140	1 074 832
5	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	33	1540	50 820
	Մետաղական խողովակներ Ø 273մմ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ (մետ. խող. տակ)	մ³	2,699	9360	25 262,64
2	Մետ. խողովակների Ø 273x5մմ տեղադրում	գծմ	72,2	44210	3 191 962
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	գծմ	71,2	1880	133 856
4	Միաձույլ բետոնե B-20 գլխամասեր	մ³	0,36	122140	43 970,40
5	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	1,2	1530	1836
6	Խողովակի և 50x60x300սմ վաքի միացման միաձույլ բետոն	մ³	0,04	122140	4885,60
	Հարակցում գոյություն ունեցող ճանապարհի հետ				
1	Հատիկավոր ենթահիմք. (ավազակոպիճ) h=10 սմ	մ²	1262,05	910	1 148 465,50
2	Խճավազային հիմք (C-5) h=20սմ	մ²	877,38	2000	1 754 760
3	Խոշորահատիկ բարձր ծակոտկենությամբ ա/բ h=6սմ	մ²	831,55	5060	4 207 643
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	831,55	6685	5 558 911,75
5	"Б" տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ²	831,55	4910	4 082 910,50
				Ընդամենը VII	**49 735 548,51**
	VIII.Կողնակներ				
1	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում հարակցման կողնակների լիցք 3կմ միջին հեռ. (հարթում. ջրում. խտացում)	մ³	47	2440	114 680
2	10e-IV կարգի բնահողի մշակում պահուստում էքս. 1.25մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում հարակցման կողնակների լիցք 7կմ միջին հեռ. (հարթում. ջրում. խտացում)	մ³	65	2870	186 550
3	Կողնակների ամրացում ավազակոպճային նյութով հմիջ.=10սմ.	մ²	431	1060	456 860
				Ընդամենը VIII	**758 090**
	IX. Մայթեր				
1	Միաձույլ բետոնե ծածկի քանդում էքս. 1.0մ3 շ.տ բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5.0կմ h=8սմ	մ³	5,57	2370	13 200,90
2	Հավաքովի ե/բ քայքայված 50x60սմ վաքերի ապամոնտաժում էքս. 1.0մ3 շ.տ բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5.0կմ	մ³	13,22	2370	31 331,40
3	Բետոնե սալիկ ձևավոր. մոխրագույն h=6սմ	մ²	239	8800	2 103 200
4	Ցեմենտավազային չոր խառնուրդ h=9սմ (70% ավազ. 30% ցեմենտ)	մ²	239	4210	1 006 190
5	Միաձույլ բետոնե եզրաշար B-15 10x20սմ - ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.005մ3	գծմ	227	1510	342 770
6	Միաձույլ բետոնե եզրաշար B-20 20x50սմ - ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.01մ3	գծմ	128	7360	942 080

7	Մետաղական բազրիքի տեղադրում 257.25գծմ /105սեկցիա	հատ	52	33970	1 766 440
	60x30մմ/3.0մմ	գծմ/կգ	127.4/487.942	690	87 906
	60x40մմ/3.0մմ	գծմ/կգ	159.64/686.452	690	110 151,60
	60x30մմ/3.0մմ	գծմ/կգ	114.92/440.144	690	79 294,80
	40x30մմ/3մմ	գծմ/կգ	87.36/252.47	690	60 278,40
	40x30մմ/3մմ	գծմ/կգ	104.52/302.063	690	72 118,80
	70x40մմ/4մմ	գծմ/կգ	5.2/32.188	690	3 588
				Ընդամենը IX	**6 618 549,90**
	X. Ջրահեռացում երթևեկելի մասից				
1	Երկայնական վաք Ճ-2-20	գծմ	3451	14390	49 659 890
	Ջրնետում կողնակից	հատ	27	770	20 790
1	10elV կարգի բնահողի մշակում բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	55	7720	424 600
2	Հավաքովի Ճ-4-20 բետոնե բլոկների տեղադրում	հատ	110	10210	1 123 100
3	Հավաքովի Ճ-5 բետոնե բլոկների տեղադրում	հատ	82	17460	1 431 720
	Վաք լիցքի շեպի վրա	գծմ	74	770	56 980
1	10elV կարգի բնահողի մշակում բարձում ձեռքով ա/ի և տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	11,1	7720	85 692
2	Հավաքովի Ճ-6 վաքերի տեղադրում	հատ	168	13660	2 294 880
	Հոսքամարիչ լիցքի շեպի տակ	հատ	27	2300	62 100
6	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում էքս. 1.25մ3 շ.տ. ա/ի. տեղափոխում լցակույտ 5կմ միջին հեռավորությամբ	մ³	27,3	4830	131 859
7	Հավաքովի Ճ-8 բետոնե բլոկների տեղադրում	հատ	432	9110	3 935 520
8	Հավաքովի Ճ-7 բետոնե բլոկների տեղադրում	հատ	27	20140	543 780
9	Հավաքովի Ճ-9 բետոնե բլոկների տեղադրում	հատ	81	12300	996 300
				Ընդամենը X	**60 767 211**
	XI. Հավաքովի ե/բ 50x60x300սմ վաքեր				
1	Ավազակոպճային նախապատրաստում	մ³	28,40	9360	265 824
2	Հավաքովի ե/բ 50x60սմ վաքերի տեղադրում Կափարիչ 8x45x100սմ	գծմ	355	34 430	12 222 650
3	Բետոն p-1.087տ. (ամրան A240c-44.09 կգ/մ3)	մ³	51,48	42 660	2 196 136,80
4	Ջրամեկուսացում	մ²	514,75	1530	787 567,50
				Ընդամենը XI	**15 472 178,30**
	XII. Ճանապարհային նշաններ				
1	Նոր ճան. նշանների տեղադրում. այդ թվում՝	հատ			
2	- նախազգուշացնող	հատ	58	24300	1 409 400
	- առավելության	հատ	51	30030	1 531 530
	- թելադրող	հատ	2	27030	54 060
	- տեղեկատվության	հատ	4	10440	41 760
	- լրացուցիչ տեղեկատվության	հատ	8	14000	112 000
	- անհատական նախագծման (հատուկ թելադրանքի)	մ²	4,47	60310	269 585,70
	- անհատական նախագծման (տեղեկատվության)	մ²	9,73	60310	586 816,30
3	Կանգնակ մետ. խող 57x4մմ	հատ	114	22330	2 545 620
4	Միաձույլ բետոնե հիմք B-15	մ³	11,97	53650	642 190,50
5	Գոյություն ունեցող նշանների ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	հատ	11	5330	58 630
				Ընդամենը XII	**7 251 592,50**
	XIII. Նշագծում				
1	Նշագծումը ընդհանուր մակերեսը (թերմոպլաստ h=3մմ. ապակե գնդիկների ավելացմամբ) այդ թվում՝	մ²	1040,03	12250	12 740 367,50

				Ընդամենը XIII	12 740 367,50
	XIV. Արգելափակոցներ				
2	Մետ. արգելափակոցների տեղադրում ծ 4մմ. կանգնակներ շվելեր N16. քայլը 4մ կոշտ հարվածամարիչով	գծմ	252	27360	6 894 720
3	Պոլիմերային ուղղորդ սյուների (C-1) տեղադրում	հատ	256	4250	1 088 000
4	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ապամոնտաժում. վերադարձ սեփականատիրոջը	գծմ	50	2360	118 000
5	Գոյություն ունեցող ե/բ սյուների ապամոնտաժում. բարձում ա/ի տեղափոխում լցակույտ 5 կմ միջ. հեռ.	հատ	192	5170	992 640
				Ընդամենը XIV	9 093 360
	XV. Մետաղական և հավաքովի խողովակներ				
	Մետաղական ժարտ=273մմ խողովակի(պատյան) տեղադրում				
1	Հող. աշխատանքներ 9в-II կարգի բնահողում փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	6	3320	19 920
2	Հող. աշխատանքներ 33г-III կարգի բնահողում փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	0,5	5230	2 615
3	Հող. աշխատանքներ 33г-III կարգի բնահողում փոսորակների փորման համար ձեռքի աշխատանքով կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	20	4010	80 200
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	0,96	9360	8 985
5	Մետաղական ժարտ=273մմ խողովակի (պատյան) տեղադրում 1գծմ=33.05կգ. պատի հաստ. 5մմ	գծմ	24	44210	1 061 040
6	Պոլիէթիլենային d=160մմ խողովակի ներքաշում պատյանի մեջ	գծմ	24	1860	44 640
7	Պոլիէթիլենային խողովակի տեղադրում d=160x4.9մմ	գծմ	24	5890	141 360
8	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ ժարտ=273մմ պատյան	գծմ	24	1880	45 120
9	Հետադարձ լիցք				
	ձեռքի աշխատանքով (33г-III)	մ³	20	1660	33 200
10	Գոյություն ունեցող d=160մմ պոլիէթիլ. խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	7	470	3 290
	Մետաղական ժարտ=530մմ խողովակների տեղադրում				
1	Հող. աշխատանքներ 33г III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.0.65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	40	1970	78 800
2	Հող. աշխատանքներ 33г III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.0.65մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	128	640	81 920
3	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	1,416	9360	13 253,76
4	Խճային հիմք h=20սմ	մ³	15,104	9230	139 409,92
5	Ջրհորի կառուցում միաձույլ բետոնից B 20. F100	մ³	21,319	88240	1 881 188,56
6	Մետաղական ժարտ= 530 մմ խողովակի տեղադրում 1գծմ=90.29կգ. պատի հաստ. 7մմ	գծմ	96,8	134810	13 049 608
7	Որմնակապային ամրաններ Ø16A500c l=45սմ	կգ	11,36	910	10 337,60
8	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ ժարտ= 530 մմ	գծմ	94,4	3660	345 504
	բետոն	մ²	82,176	1530	125 729,28
9	Հետադարձ լիցք				
	բուլդոզերով (33г III)	մ³	114	1000	114 000
	ձեռքի աշխատանքով (33г III)	մ³	14	1660	23 240
10	Մետաղական ցանցի պատրաստում և տեղադրում	կգ	231,328	930	215 135,04

11	Մուտքում գոյություն ունեցող ջրհորի քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	1,45	33460	48 517
12	Ելքում գոյություն ունեցող ջրհորի քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5.0կմ հեռ. Վրա	մ³	4,24	33460	141 870,40
13	Գոյություն ունեցող d=500մմ ա/g խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	73,5	1590	116 865
14	Գոյություն ունեցող d=400մմ ա/g խողովակի ապամոնտաժում վերադարձ սեփականատիրոջը	գծմ	19,9	1250	24 875
	Մետաղական ժարտ=720մմ խողովակի երկարացում				
1	Հողային աշխատանքներ 33r III կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.0.65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	1,0	7840,35	7 840,35
2	Հող. աշխատանքներ 33r III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.0.65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	8,0	1970	15 760
3	Հող. աշխատանքներ 33r III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.0.65մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	2,0	640	1 280
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ³	0,65	9360	6 084
5	Խճային հիմք h=30սմ	մ³	7,452	9230	68 781,96
6	Գլխամասերի կառուցում միաձույլ բետոնից B20. F100				
	հիմքեր	մ³	0,832	122140	101 620,48
	իրաններ	մ³	1,916	122140	234 020,24
7	Ելքում եզրապատի կառուցում միաձույլ բետոնից B20. F100	գծմ	4,00	23620	94 480
8	Միացման միաձույլ բետոն B20. F100	մ³	0,477	122140	58 260,78
9	Որմնակապային ամրաններ Ø16A500c l=134սմ	կգ	4,24	910	3858,40
10	Մետաղական ժարտ=720մմ խողովակի տեղադրում 1գծմ=123.09կգ. պատի հաստ. 7մմ	գծմ	11,20	186120	2 084 544
11	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով				
	խողովակ	գծմ	10,80	4980	53 784
	բետոն	մ²	10,406	1530	15 921,18
12	Հետադարձ լիցք				
	բուլդոզերով (33r III)	բն	1,5	1000	1500
	ձեռքի աշխատանքով (33r III)	մ³	0,5	1660	830
	Հավաքովի ե/բ խողովակների d=1.0մ տեղադրում				
1	9в-II կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 1.0մ3 շ.տ. ա/ի և տեղափոխում 2կմ. պատվիրատուի կողմից հատկացված տարածք. պահեստավորում հետագա օգտագործման համար	մ³	7	1000	7000
2	Հողային աշխատանքներ 33r III կարգի բնահողում հունի ուղղման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	125	1890	236 250
3	Հող. աշխատանքներ 9в II կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	14	1000	14 000
4	Հող. աշխատանքներ 33r III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	69	1890	130 410
5	Հող. աշխատանքներ 33r III կարգի բնահողում փոսորակների փորման համար էքս.1.0մ3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	130	630	81 900
6	Ավազակոպճային նախապատրաստում h=10 սմ	մ³	17,03	10090	171 832,70
7	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100				
	հիմքեր	մ³	6,32	122140	771 924,80
	իրաններ	մ³	19,376	122140	2 366 584,64

8	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B 20.F 100	մ³	14,688	90 800	1 333 670,40
9	Հավաքովի ե/բ N12 օղակի տեղադրում V=0.35 մ3 P=0.9տ չափերը 120x100x10սմ ամր.պարուն.Ac240=24.0կգ/մ3. Ac500=81.2կգ/մ3 B20. F200 Օղակների կարերի մշակում (կանեփաթել ներծծված բիտումով)	հատ	62	119110	7 384 820
	Օղակների հիմքերի միաձույլ բետոն B 20.F 100	մ³	38,78	90 800	3 521 224
11	Սոսնձային ջրամեկուսացում	մ²	62,94	7180	451 909,20
12	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	316,4	1530	484 092
13	Հետադարձ լիցք	-			
	բուլդոզերով (10e VI)	մ³	0	-	-
	ձեռքի աշխատանքով (10e VI)	մ³	0	-	-
	բուլդոզերով (33r III)	մ³	117	1000	117 000
	ձեռքի աշխատանքով (33r III)	մ³	13	1960	25 480
14	Գոյ. ունեցող բետոնե գլխամասերի քանդում հետահար մուրճով. բարձում ա/ի էքս. 1.0մ3 շ.տ և տեղափոխում լցակույտ 5.0կմ հեռ. վրա	մ³	4,8	33790	162 192
15	Գոյություն ունեցող ե/բ օղակների ապամոնտաժում. բարձում ա/ի և տեղափլցակույտ 5.0կմ հեռ. վրա (d=1.0մ)	մ³	13,3	48 350	643 055
	Ընդամենը XV				**38 502 534,29**
	Ընդհանուրը				**1 052 000 000**
	Ընդամենը չնախատեսված ծախսեր*				**28 000 000**
	Ամբողջը				**1 080 000 000**

**Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%*

*** Չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:*

Հիմք՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 8-րդ հավելված

*Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լոեպոլդ և ընկերներ» ՍՊԸ-
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39/1 ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470074677530000
ՀՎՀՀ 00106947
Տնօրեն
Վ. Բաղալյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« » « » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 հատվածի վերակառուցման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 240 օր
1	Հողային աշխատանքներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 90 օր
2	Կողային առուներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 90 օր
3	Կողային առուների ամրացում	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 220 օր
4	Կողնակներ	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230 օր
5	Երթևեկելի մաս	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230օր
6	Իջատեղեր և մուտքեր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 240օր

7	**Հարակցում գոյություն ունեցող ճանապարհի հետ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230օր
8	**Մայթեր**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230օր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230օր
9	**Ջրահեռացման էլեմենտներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 230օր	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 160օր
10	**Անվտանգության էլեմենտներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 240 օր
11	**Հավաքովի ե/բ խողովակների տեղադրում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 180օր
	Ընդհանուր աշխատանքներ	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո**	**ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 240 օր::**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լոեպոլդ և ընկերներ» ՍՊԸ-
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39/1 ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470074677530000
ՀՎՀՀ 00106947
Տնօրեն
Ա. Բաղալյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«04» «08» 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/553	/Մ-12/-Կոռնիձոր-ԱՀ սահման ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+000 հատվածի վերակառուցման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լոեպոլդ և ընկերներ» ՍՊԸ-
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 39/1 ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470074677530000
ՀՎՀՀ 00106947
Տնօրեն
Ա. Բաղդասյան

/ստորագրություն/
Կ.Տ

«24» 08 Հավելված թիվ 4
2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/20Շ-1 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն